



ՆՈՐ ԱՎԵՏԻՍ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Հայոց սրտերը բոլոր, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, ցնծությամբ կրօնունեն հիսնամյակը Սարդարաբադի հաղթության:

1915-ին՝ Եղեռն, 1918-ին՝ Սարդարաբադ:

Մահ և վերածնունդ, ահեղ, բայց վսեմ ճակատագիրը մեր ազգին:

Հիսուսով փայլատակող տիեզերական խորհուրդը մահվան և հարության, անգամ մը ևս ճառագայթեց մեր ժողովուրդի կյանքի փորձառության մեջ:

Նոր Ավարայրի հայ քաջերը մահվամբ մահը հաղթեցին և կյանք պարգևեցին հայ ժողովուրդին:

Գերեզման իջած հայ ժողովուրդը Սարդարաբադով նոր կյանքի կոչվեցավ՝ իր քաջ որդվոց սուրբ արյունով: Փրկվեցավ մեր փոքր ածուց ամբողջական բնաջնջումէ: Սկիզբ առավ նոր պատմությունը հայուն:

Սարդարաբադի հաղթության վեմին վրա քարձրացավ և կշարունակե քարձրանալ մայր Հայաստանը ամենայն հայոց՝ հպարտ ու կենսալի:

Պատմական դեպքեր, ինչպիսիք են Ավարայրի և Սարդարաբադի ճակատամարտերը, նշանակալից ու փրկարար եղած են ոչ միայն իրենց ժամանակաշրջանին համար, այլ դարձած են նաև առաջնորդող ոգի և մղիչ ուժ ամեն անգամ, երբ հայրենիքը գտնված է վտանգի առջև:

Ավարայր և Սարդարաբադ կխորհրդանշեն հայ ժողովուրդի պայքարը իր գոյատևման, իր հայրենիքին ու իր ազատության համար: Այս իմաստով Ավարայրի և Սարդարաբադի ճակատամարտերը նույն մարտն են, որ տևապես մղված է ու կմղվի հաճախ ազգին ու հայրենիքին:

Հարգանք և օրհնություն Սարդարաբադի քաջերուն, նոր Վարդաններուն և Ղևոնդ Երեցներուն:

Հարգանք և օրհնություն հայ ժողովուրդին:

Հարգանք և օրհնություն վերածնած մայր Հայաստանին:

Վահագն Դ.